ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«___»_____ 2020 թ. N _____-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն).

2) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

Հ/Հ	ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ	ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ	ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	ԹՎԱԳՐՈՒՄԸ
1.	ԱՀ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ	Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ		
2.	ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ	Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ		
3.	ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ	Ա. ԼԱՉԱՐՅԱՆ		

*Առաջարկությունները և առարկությունները՝*_____

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարար *Ժ. Միրզոյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____-ի
N _____ -Ա որոշման

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծ Ր Ա Գ Ի Ր
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2020 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

I. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական կենդանիների ընտելացումից անցել է ավելի քան 10 000 տարի: Պատմական այդ հսկայական ժամանակաշրջանում մարդկային հասարակությունն ապրել է զարգացման բավականին շատ էտապները և հասել նյութական ու հոգևոր մշակույթի ժամանակակից մակարդակին, բայց և այնպես, այսօր, ինչպես միշտ, նրա գոյության համար նյութական բարիքների ստացման հիմնական աղբյուրներից մեկը շարունակում է մնալ անասնապահությունը:

Անասնապահության նշանակությունը ժողովրդական տնտեսությունում չի սպառվում արժեքավոր սննդամթերքների՝ մսի, կաթի, յուղի, ձվի և այլնի արտադրությամբ, շատ կարևոր է բարձրորակ հումքի՝ բրդի, կաշվի, մորթու և այլնի ստացումը, գյուղատնտեսական կենդանիների՝ իբրև բանող ուժի օգտագործումը և օրգանական պարարտանյութերի ստացումն ու օգտագործումը դաշտավարության և գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման մեջ:

Անասնապահությունը հանդիսանում է աշխարհի բոլոր երկրների տնտեսության առավել կարևոր ճյուղերից մեկը: Անասնապահության զարգացման, անասնապահական առատ և անարատ մթերքների արտադրության խնդիրը և դրա լուծմամբ պայմանավորված անասնաբուծության զարգացումը միշտ էլ եղել է գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականության գերակայություններից:

Անասնապահության զարգացման, մթերատվության բարձրացման գործում առանձնակի կարևորվում է առաջավոր տեխնոլոգիաների և գիտական փորձերի կիրառման դերը, ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական զինվածությունը:

Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման համար ռիսկեր են առաջացնում՝

1) անբավարար կերային բազա, նրանց մեջ անհրաժեշտ սննդատարրերի և վիտամինների բացակայությունը.
2) անասնաշենքերի պայմանների ու հիգիենայի ոչ բավարար մակարդակը,
3) կենդանիների պահվածքի և խնամքի կանոնների խախտումները,
4) անասնաբուժական և անասնաբուծական միջոցառումների ժամանակին չիրականացնելը.
5) մարդկանց կողմից կենդանիների բուծման անհարկի միջամտությունը և շփումները:

Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացվում են անասնագլխաքանակի ավելացման շարժառիթով պայմանավորված անասնաբուծության մեքենայացմանը, անասնաշենքերի էլեկտրաֆիկացմանը, մշտական հոսող խմելու ջրով ապահովմանը, ինչպես նաև անասնաշենքերի մաքրությունն ապահովելու նպատակով հարմարությունների ստեղծմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

Սույն Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***անասնաշենք***՝ անասուններ պահելու համար նախատեսված գետնափոր, կիսագետնափոր, վերգետնյա, ժայռափոր, քարե և (կամ) փայտե կառույց, որի

նկատմամբ առկա է գույքային իրավունքների պետական գրանցման վկայական (համապատասխան տեղեկանք).

2) ***գյուղատնտեսական կենդանիներ՝*** խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ (տավար, գոմեշ, ոչխար, այծ), խոզ, ձի, ջորի, ավանակ, ճագար, հավ, հնդկահավ, բադ, սագ և այլն.

3) ***գյուղատնտեսական կենդանիների պահվածք՝*** մարդու հսկողության ներքո կենդանիների խնամքի միջոցառումների համալիր, որը ներառում է տեղաբաշխումը, կերակրումը, զոոհիգիենիկ պայմանների ստեղծումը, օրվա ռեժիմի պահպանումը.

4) ***էլեկտրաֆիկացում՝*** անասնաշենքերի էլեկտրաէներգիայով ապահովում.

5) ***ջրաֆիկացում՝*** անասնաշենքերի՝ կենդանիների խմելու և սանիտարահիգիենիկ մի շարք աշխատանքների իրականացման համար մշտական հոսող ջրով ապահովում:

Անասնագլխաքանակի մեկ պայմանական գլխի հաշվառման գործակիցները հետևյալն են՝ կով, արտադրող ցուլ՝ 1, խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասակային այլ խմբերի կենդանի՝ 0,66, մանր եղջերավոր կենդանի՝ 0,1, խոզեր՝ 0.3, թռչուն՝ 0.025:

Ի. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Ներկայումս անասնաբուծության զարգացմանը խոչընդոտող գործոնները հետևյալն են.

1) կերարտադրության ոչ բավարար մակարդակը և միակողմանի բնույթը.

2) գյուղատնտեսական կենդանու պահվածքի, բուծման և որակական բարելավման ժամանակակից տեխնոլոգիաներով ներդրման հնարավորությունների բացակայությունը.

3) խոշոր և մանր եղջերավոր կենդանիների ֆերմաների՝ մեկ հարթակի վրա կողք կողքի լինելը (զոոհիգիենիկ պահանջների համաձայն դրանք պետք է գտնվեն իրարից 150-200 մետր հեռավորություն վրա),

4) մատղաշի ստացման և աճեցման համար համապատասխան պայմանների բացակայությունը, ինչպես նաև նախրի վերարտադրության տեխնոլոգիական խախտումները.

5) նախրում անասնաբուծական և տոհմային հաշվառման ընդհատվածությունը.

6) կենդանիների թերկերակրման հետևանքով ցածր մթերատվությունը.

7) կովերի արհեստական սերմնավորման չիրականացումը.

8) կովերի մեքենայական կթի բացակայությունը.

9) գյուղատնտեսական կենդանիների արոտային պահվածքի ժամկետի ոչ հիմնավորված երկարաձգումը.

10) տնտեսություններում անասնաբույծ սելեկցիոներ մասնագետի բացակայությունը:

2. Սույն Ծրագրի նպատակը Արցախի Հանրապետությունում առկա անասնաշենքերի նոր տեխնոլոգիաներով արդիականացումն է, անասնաշենքերի ողջ պոտենցիալի լիարժեք օգտագործումը և, համակարգային մոտեցմամբ, մրցունակ և արդյունավետ անասնաբուծություն ունենալը, ինչն իր հերթին կնպաստի Արցախի Հանրապետության գյուղատնտեսության զարգացմանը:

3. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) մեքենայացնել անասնապահությունը՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը.

2) նպաստել անասնաշենքերի պոտենցիալի լիարժեք օգտագործմանը.

3) նպաստել անասնապահական հումքի և նյութերի ռացիոնալ օգտագործմանը.

4) բարձրացնել անասնապահական արտադրանքի որակը.

5) ապահովել արտադրանքի ինքնարժեքի նվազեցումը.

6) ապահովել անասնաշենքերի էլեկտրաֆիկացումը և մշտական հոսող խմելու ջրի առկայությունը.

7) ստեղծել հարմարություններ անասնաշենքերում մաքրության ապահովման համար.

8) ստեղծել հարմար նախադրյալներ անասնապահությամբ զբաղվողների անասնապահական ֆերմաներում շուրջօրյա կացության նվազագույն պայմաններն ապահովելու համար:

Անասնապահության խթանման զարգացման գործում առկա դժվարությունները հիմնականում պայմանավորված են անասնապահությամբ զբաղվող սուբյեկտների և գյուղացիական տնտեսությունների ֆինանսական սուղ հնարավորություններով, անասնապահության մեքենայացման միջոցների բարձր գներով, իսկ տվյալ դժվարությունների հաղթահարման հիմնական միջոցը պետական աջակցության մեխանիզմների ավելացումն ու տվյալ ենթակառուցվածքների հետագա զարգացումն է:

II. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4. Ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արցախի Հանրապետությունում առկա անասնաշենքերը լիարժեք չեն օգտագործվում, հիմնականում էլեկտրաֆիկացված չեն, անասնաշենքերում աշխատանքներն իրականցվում են մարդկային ռեսուրսի հաշվին՝ ավելացնելով մարդկանց շփումը կենդանաբուծական մթերքների ստացմանը, անասնաշենքերն ապահովված չեն կենդանիների խմելու, ինչպես նաև անասնաշենքերի մաքրության և հարմարավետության համար մշտական հոսող ջրով:

5. Արցախի Հանրապետությունում խոշոր և մանր եղեջարավոր կենդանիների ու խոզերի պահվածքի համար նախատեսված առկա անասնաշենքերի վիճակի ուսումնասիրությունների նախնական արդյունքները ներկայացված են N 1 աղյուսակում:

6. Անասնապահության մեջ ձեռքի ուժի մեքենայացված աշխատանքով փոխարինման, անասնապահական աշխատանքի ավելի արդյունավետ դարձման, անասնապահին ծանր, աշխատատար և հոգնեցուցիչ աշխատանքից ազատման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) անասնաշենքերի էլեկտրաֆիկացում՝

ա. էլեկտրաֆիկացում էլեկտրագծերով,

բ. էլեկտրաֆիկացում արևային էներգիայով,

գ. ենթակայանների ձեռքբերում և տեղադրում.

2) անասնաշենքերի ջրաֆիկացում՝

ա. ակունքի կառուցում, վերակառուցում

բ. ջրագծերի անցկացում:

7. Սույն Ծրագրի շրջանակներում միջոցառումները կիրականացվեն այն շահառուների համար, որոնք տիրապետում են տասը և ավելի պայմանական գլուխ գյուղատնտեսական կենդանիների և անասնաբուծությունն իրականացնում են Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 21-ի N 391-Ն որոշմամբ հաստատված անասնաբուծությանը ներկայացվող պարտադիր պահանջներին համապատասխան:

8. Սույն Ծրագրի շրջանակներում պետական ներդրումները կատարվում են յուրաքանչյուր պայմանական գլուխ գյուղատնտեսական կենդանու հաշվով առավելագույնը 70 000 ՀՀ դրամի չափով, որից 90 տոկոսը՝ անհատույց, իսկ 10 տոկոսը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) միջոցով՝ անտոկոս փոխառության տեսքով՝ հինգ տարի մարման ժամկետով՝ պայմանագրով նախատեսված պայմաններով՝ առանց երկարաձգման հնարավորություն:

9. Եթե անասնաշենքերի էլեկտրաֆիկացման և (կամ) ջրաֆիկացման աշխատանքների կատարման արժեքը համաձայն փորձաքննության ենթարկված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում է առավելագույնը 1 000 000 ՀՀ դրամ, ապա այդ շահառուին տրամադրվում են անհատույց դրամական միջոցներ՝ հասանելիք պետական աջակցության արժեքի 90 տոկոսի չափով:

10. Անասնագլխաքանակի ավելացման հնարավորության դեպքում պետական ներդրումների չափը յուրաքանչյուր ավելացող պայմանական գլուխ գյուղատնտեսական կենդանու հաշվով կավելանա ևս առավելագույնը 70 000 ՀՀ դրամով՝ սույն ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում նշված պայմաններով:

11. Անասնագլխաքանակի ավելացման պարտադիր պայմանով կատարվող պետական ներդրումների դեպքում շահառուների համար կսահմանվի անասնագլխաքանակի ավելացման վերջնաժամկետ՝ ըստ տարիների:

12. Յուրաքանչյուր անասնաշենքի մասով կատարվելիք աշխատանքների արժեքը տրամադրվող պետական ներդրումների չափը գերազանցելու դեպքում, գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հայտատուների միջոցներով:

13. Սույն Ծրագրի շրջանակներում պետական ներդրումները նույն անասնաշենքի մասով կարող են իրականացվել միայն մեկ անգամ:

14. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը:

15. Հայտատուները նախարարության կողմից սահմանված ժամկետում նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի՝ նշելով գործունեության իրականացման վայրի, պայմանների ու պահվող անասնագլխաքանակի և անասնագլխաքանակի ավելացման հնարավորությունների մասին տեղեկությունները:

16. Հայտերի հետ միաժամանակ հայտատուները նախարարություն են ներկայացվում անասնաշենքերի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ վկայական) և անձնագրերի պատճենները և վարչակազմի կամ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ անասնաշենքը տվյալ հայտատուի կողմից փաստացի օգտագործվելու վերաբերյալ:

17. Անասնաշենքերի նկատմամբ ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության, վարձակալության կամ անհատույց օտագործման իրավունքների առկայության դեպքում հայտատուները նախարարություն են ներկայացում նաև սեփականատիրոջ (համասեփականատերերի) գրավոր համաձայնությունը անասնաշենքերի սույն Ծրագրի շրջանակներում նպատակային օգտագործման վերաբերյալ:

18. Անասնաշենքերի նկատմամբ գույքային իրավունքների պետական գրանցման վկայականի բացակայության դեպքում սույն Ծրագրից օգտվելու պարտադիր պայման է հանդիսանում վարչակազմի կամ համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքը՝ անասնաշենքը տվյալ հայտատուի կողմից փաստացի օգատգործվելու վերաբերյալ:

19. Անասնաշենքերի նկատմամբ վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների գործողության ժամկետը հայտ ներկայացնելու պահին չի կարող պակաս լինել յոթ տարուց:

20. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով նախարարություն դիմած հայտատուների ներկայացրած հայտերի ուսումնասիրման նպատակով ստեղծվում է հանձնաժողով:

21. Հանձնաժողովը հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո տասնհինգօրյա ժամկետում սահմանված կարգով տեղում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, անասնաշենքերի էլեկտրաֆիկացման և ջրաֆիկացման հնարավորություններն ու պայմանները և տալիս է եզրակացություն տվյալ տեղանքում Ծրագրի իրականացման չափերի և նպատակահարամարության մասին:

22. Հանձնաժողովի տված դրական եզրակացության դեպքում հայտատուն՝

1) պատվիրում է անասնաշենքերի էլեկտրաֆիկացման և (կամ) ջրաֆիկացման աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթերը,

2) նախարարություն է ներկայացնում անասնաշենքերի էլեկտրաֆիկացման և (կամ) ջրաֆիկացման աշխատանքների կատարման նախագծանախահաշվային փաստաթղթերը, էլեկտրամատակարարման և ջրամատակարարման տեխնիկական պայմանները (ջրային համակարգերից օգտվելու դեպքում) կամ ջրօգտագործման նախնական համաձայնությունը (ջրային ռեսուրսից օգտվելու և շինարարության ավարտից հետո ջրօգտագործման թույլտվություն ստանալու հնարավորության դեպքում).

23. Հայտատուի պատվիրած և նախարարություն ներկայացված փաստաթղթերը ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

24. Նախարարությունը փորձաքննության արդյունքների հիման վրա՝

1) տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և հիմնադրամ է ներկայացնում (բացառությամբ սույն Ծրագրի 9-րդ կետում նշված դեպքերի) դրական եզրակացություն ստացած հայտատուների ցանկը՝ նշելով յուրաքանչյուր անասնաշենքի մասով կատարվելիք աշխատանքների ծավալները և անհատույց և (կամ) անտոկոս փոխառությամբ, տրամադրման ենթակա գումարները և անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարների վերադարձման ժամկետները կամ վաղաժամկետ մարման հնարավորությունը, իսկ կատարվելիք աշխատանքների արժեքը տրամադրվելիք պետական աջակցության չափը գերազանցելու դեպքում նաև հայտատուի սեփական

միջոցների հաշվին կատարվող ներդրումների չափը՝ պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով:

2) սույն Ծրագրի 9-րդ կետում նշված դեպքերում շահառուների հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր՝ նախատեսելով նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների կատարման պայմանները և ժամկետները սահմանող դրույթներ:

25. Հիմնադրամը՝

1) դրական եզրակացություն ստացած հայտատուների և լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ ընկերություններ) հետ տասնհինգօրյա ժամկետում կնքում է համապատասխան (եռակողմ) պայմանագրեր նախատեսելով սույն Ծրագրի 11-րդ, 34-րդ և 35-րդ կետերով նախատեսված դրույթները՝ համաձայն N 2 ձևի.

2) սույն Ծրագրի 24-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գումարների լրիվ կամ մասնակի վերադարձման դեպքում՝ ապահովում է դրանց փոխանցումը պետական բյուջե.

3) յուրաքանչյուր պայմանագիր կնքելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ՝ օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումն ապահովելու նպատակով.

26. Կատարվելիք աշխատանքների արժեքը տրամադրվելիք պետական աջակցության չափը գերազանցելու դեպքում (բացառությամբ սույն Ծրագրի 9-րդ կետում նշված դեպքերի), եռակողմ պայմանագրում նախատեսվում է հայտատուի կողմից առաջին փուլով կատարվելիք սեփական ներդրումների չափին համապատասխան աշխատանքների դիմաց վարձատրությունը:

27. Ընկերությունների կողմից աշխատանքների ընդունումն իրականացվում է հիմնադրամի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից, որի կազմում ընդգրկվում են նաև նախարարության համապատասխան մասնագետները:

28. Նախարարությունը հիմք ընդունելով սույն Ծրագրի 25-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով:

29. Եթե պատվիրված աշխատանքներում կատարված ներդրումների 50 կամ ավելի տոկոսը պատկանում է հայտատուին, ապա վերջինիս ցանկությամբ կառուցված ենթակառուցվածքների (էլեկտրագծերի, ենթակայանների, արևային էներգահամակարգերի և ջրագծերի) նկատմամբ սեփականության իրավունքն անցնում է հայտատուին, իսկ նման ցանկության բացակայության դեպքում պետությանը՝ ի դեմս նախարարությանը:

30. Կառուցված ենթակառուցվածքների նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողի կողմից պետք է ապահովվի այդ օբյեկտների անխափան շահագործումը, ընդ որում՝ ջրային ենթակառուցվածքների նկատմամբ սեփականության իրավունքը համայնքներին կամ պետությանն անցնելու դեպքում, ջրային անհրաժեշտ ռեսուրսների առկայության պարագայում, պետք է երաշխավորվի անխափան ջրամատակարարում՝ հայտատուի անասնաբուծական գործունեության ողջ ընթացքում:

31. Ծրագրի շրջանակներում կառուցված էլեկտրագծերի, էլեկտրական ենթակայանների շահագործման ընթացքում համակարգում հաշվարկված կորուստները ենթակա են փոխհատուցման պետական բյուջեի միջոցների հաշվին՝ այդ համակարգից օգտվող շահառուների կողմից ծախսած էլեկտրաէներգիայի քանակին տոկոսային համամասնությամբ:

32. Պետական ներդրումներով կատարվող աշխատանքների ավարտից հետո հայտատուի կողմից առնվազն յոթ տարի տվյալ անասնաշենքում պետք է ապահովվի նպատակային անասնաբուծական գործունեությունը:

33. Կառուցված ենթակառուցվածքների նկատմամբ սեփականության իրավունքը պետությանն անցնելու դեպքում այդ ենթակառուցվածքների սպասարկումն կիրականացվի պետական բյուջեով նախատեսված համապատասխան միջոցներով:

34. Սույն Ծրագրի նախատեսված աշխատանքների ավարտից հետո հայտատուները պարտավորվում են հանձնաժողովի սահմանած չափով օգտագործել անասնաշենքերի հնարավորությունները՝ իրականացնելով նաև ավելացվող գլխաքանակի համարակալում՝ շրջանային անասնաբուժական սպասարկման կայաններին պարտադիր տեղեկացմամբ:

35. Նախարարությունը, սահմանած ժամկետում անասնաշենքի հնարավորություններն սահմանված չափով չօգտագործելու դեպքում ենթակառուցվածքների տեղադրման ուղղությամբ կատարված պետական ներդրումներն պետական բյուջե վերադարձման (ընդ որում փոխառության տեսքով տրամադրված գումարները վաղաժամկետ) գործընթացն կազմակերպելու նպատակով տեղեկություններ է ներակայացնում հիմնադրամ:

36. Անասնաշենքի հնարավորությունների ամբողջությամբ օգտագործումը հավաստվում է համայնքի ղեկավարի և համայնքը սպասարկող անասնաբույժի կողմից տրված տեղեկանքներով:

37. Սույն Ծրագրի 24-րդ կետի 2-րդ ենթակետում նախատեսված և պայմանագրով ամրագրված պայմաններով և ժամկետներում աշխատանքների չիրականացման դեպքում հայտատուների կողմից պետական աջակցության գումարը ենթակա է վերադարձման պետական բյուջե:

38. Հիմնադրամը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ քան միչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, նախարարություն է ներկայացնում տեղեկություններ՝ տրամադրված և վերադարձված ու պետական բյուջե փոխանցված գումարների մասին:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

39. Անասնապահությունն աստիճանաբար փոխադրվում է արդյունաբերական հիմքերի վրա: Անասնապահության զարգացման մեջ զգալի արդյունքների գրանցումը հնարավոր է իրագործել միայն առաջադիմական տեխնոլոգիաների ներդրմամբ, անասնաշենքերում աշխատանքների հատուկ ինժեներական կազմակերպմամբ, գործընթացների տեխնոլոգիական գծերի համակարգային մեքենայացմամբ, որոնց համար խոչընդոտներ է ստեղծում էլեկտրաէներգիայի և ջրի բացակայությունը:

40. Սույն Ծրագրի իրականացման արդյունքում՝

1) նախադրյալներ կստեղծվեն նորագույն մեխանիզմների կիրառմամբ անասնապահության մեջ տնտեսավարողների եկամուտների ավելացման համար.

2) ծրագրի իրականացումը հնարավորություն կտա անասնաշենքերն ապահովել էլեկտրաէներգիայով և ջրով, ինչն իր հերթին նախադրյալներ կստեղծի մատչելի մեխանիզմների կիրառմամբ մեքենայացնել անասնապահությունը՝ ապահովելով առավել անվտանգ սննդամթերքի արտադրություն.

3) անասնապահության մեքենայացման մակարդակի բարձրացմամբ՝ տնտեսապես կամրապնդվեն շահառու անասնապահական տնտեսությունները և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար.

4) գյուղատնտեսական կենդանիների պահվածքի համար նպաստավոր պայմանների ապահովմամբ կհասնենք անասնապահական մթերքների արտադրության շահավետ կազմակերպմանը, արտադրության ծավալների ավելացմանը, կենդանիների մթերատվության բարձրացմանը, նրանց անկորուստ վերարտադրության ապահովմանը, հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետ իրականացմանը.

5) Ծրագրի գործողության առաջին տարվա արդյունքներից ելնելով հնարավորություն կստեղծվի ձևավորել առաջարկություններ՝ Ծրագրի ծավալների վերանայման՝ ավելացման ուղղությամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձև N 1
Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն

ՀԱՅՏ

Դիմող _____
(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)
_____
Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____
Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____
Պետական գրանցման և ՀՎՀՀ վկայականների համարները _____
Գործունեության իրականացման վայրը _____
Անասնաշենքի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթուղթը և համարը _____
_____
Անասնագլխաքանակը _____ գլուխ _____
(կենդանու տեսակը)
_____ համար
_____
_____
(հայտի նպատակը)
Անասնագլխաքանակը հնարավոր է ավելացնել _____ գլխով:

Հայտին կից ներկայացվում են՝
1._____
2._____
3._____
4._____
5._____
6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____
_____
_____

_____ _____
(անուն,ազգանուն /անվանում/) (ստորագրությունը)

Կ.Տ.

«____» _____ 20___ р.

Ձև N 2

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱՊԱԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N

ք. Ստեփանակերտ «____»_____ 20____թ.

_____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները

այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա,

պաշտոնը, անունը, ազգանունը

_____,

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները

այսուհետ՝ «Կապալառու» ի դեմս՝_____, որը գործում է _____ հիման վրա

պաշտոնը, անունը, ազգանունը

և ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամը, ի դեմս _____, ով գործում

պաշտոնը, անունը, ազգանունը

է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Վճարող», միասին անվանվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանարի առարկան

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ, «Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման» ծրագրի շրջանակներում, կատարել _____-ի

1) անասնաշենքերի էլեկտրաֆիկացում՝

ա. էլեկտրաֆիկացում էլեկտրագծերով,

բ. էլեկտրաֆիկացում արևային էներգիայով,

գ. ենթակայանների ձեռքբերում և տեղադրում.

2) անասնաշենքերի ջրաֆիկացում՝

ա. ակունքի կառուցում, վերակառուցում

բ. ջրագծերի անցկացում:

(անհրեժեշտն ընդգծել)

համաձայն սույն պայմանագրի հավելված հանդիսացող նախագծա-նախահաշվային փաստաթղթերի, (այսուհետև՝ Աշխատանք): Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և իր միջոցներով վճարել սույն պայմանագրի շրջանակներում աշխատանքների դիմաց վճարման ենթակա ընդհանուր գումարից՝ մինչև _____ ՀՀ դրամի չափով (ըստ անհրաժեշտության), իսկ Վճարողը պարտավորվում է վճարել աշխատանքի դիմաց վճարման ենթակա մնացորդ գումարի չափով:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ԱՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքների ավարտման ժամկետ է սահմանվում _____ը:

2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով և նյութերով ու միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1. Պատվիրատուն և Վճարողը իրավունք ունեն՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3. նշված ժամկետի խախտման դեպքում իրենց հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը և տուգանքները:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ԱՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի հավելվածով նախատեսված նախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իրենց հայեցողությամբ սահմանելով թերությունների անվճար վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.4 կետով նախատեսված տուգանքները:

3.1.4 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու պահանջել լուծելու սույն պայմանագիրը և հատուցելու իրենց պատճառված վնասները, եթե.

ա. Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ. Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծա-նախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին:

3.1.5 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.6 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են ԱՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված երաշխիքային ժամկետում:

3.1.7 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝1/ մեկ/ տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.2. Պատվիրատուն և Վճարողը պարտավոր են՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.2.5 Պատվիրատուն պարտսվոր է մինչև _____-ը տիրապետվող անասնագլխաքանակը հասցնել _____ -ի՝ իրականացնելով նաև ավելացվող գլխաքանակի համարակալում՝ շրջանային անասնաբուժական սպասարկման կայաններին պարտադիր տեղեկացմամբ:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև Պատվիրատուի կողմից տրամադրված անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ համապատասխան նախագծին:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի և Վճարողի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին£

3.4.5 Սույն պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետը խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարաման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը

4.1 Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախահաշվային փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին և Վճարողին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երեք օրինակ:

4.2 Պատվիրատուն և Վճարողը Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին են ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները Պատվիրատուի և Վճարողի կողմից ընդունված են համարվում եռակողմ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի արդյունքները նախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են եռակողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

5. Աշխատանքի գինը և վարձատրությունը

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է _____ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ:

Գինը իր մեջ պետք է ներառի Կապալառուի կողմից իրականացված բոլոր ծախսերը:

5.1.1.Սույն պայմանագրով նախատեսված գումարը Վճարողի կողմից Կապալառուին կվճարվի աշխատանքների ավարտից հետո՝ ըստ ներկայացրած կատարողականի:

5.1.2. Վճարողը վճարում է Աշխատանքի սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով ընդունելու դեպքում, պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Վճարողը՝ սույն պայմանագրի 4.3 կետով նախատեսված կարգով Աշխատանքն ընդունելու դեպքում, վճարում է Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 30 բանկային օրվա ընթացքում:

5.3. Սույն պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքների դիմաց (բացառությամբ՝ պատվիրատուի հաշվին կատարված ծախսերի)՝ Վճարողի կողմից Կապալառուին վճարված ընդհանուր գնից՝ _____ՀՀ դրամը ենթակա է հատուցման Պատվիրատուի կողմից, որի համար կնքվում է փոխառության պայմանագիր, իսկ մնացած _____ՀՀ դրամը տրամադրվում է անհատույց դրամական միջոցներ տրամադրելու պայմանագրի հիման վրա:

5.4 Սույն պայմանագրի 3.2.5 կետում նշված ժամկետում անասնաշենքի հնարավորությունները սահմանված չափով չօգտագործելու դեպքում ենթակառուցվածքների տեղադրման ուղղությամբ կատարված պետական ներդրումներն ենթակա են վերադարձման պետական բյուջե՝ ընդ որում փոխառության տեսքով տրամադրված գումարները վաղաժամկետ:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրային արժեքի 1% չափով և տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար, կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների արժեքի 0,05%-ի չափով: Սույն կետով նախատեսված տուգանքը նշանակելուց հետո պատվիրատուի կողմից նոր սահմանված ժամկետում աշխատանքը չավարտելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրային արժեքի 10 %-ի չափով:

6.3 Սույն պայմանագրի 6.2 և 6.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանք կատարելու արդյունքում Կապալառուին վճարման ենթակա գումարներից:

6.4 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1%-ի չափով: Սույն կետով նախատեսված տուգանքը նշանակելուց հետո պատվիրատուի կողմից նոր սահմանված ժամկետում աշխատանքը կրկին անգամ 3.1.3 կետով նախատեսված հիմքերով չընդունվելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրային արժեքի 10 %-ի չափով:

6.5 Պատվիրատուի կողմից Կապալառուին վճարման ենթակա գումարի վճարման ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

8.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.3 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.4 Սույն պայմանագիրը կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և սպորագրությունները

Պատվիրատու	***Կապալառու***
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
_____	_____
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Վճարող

_____
_____
_____
_____
_____
_____

_____
/ստորագրություն/
Կ.Տ.

Աղյուսակ N 1

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

20-ից 500 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ տիրապետողների մասին

ՀՀ	Գործունեության վայրը,շրջան	Ֆերմերների թիվը	Տնօրինվող գլխաքանակը	Է/էներգիայի առկայություն		Ջրի առկայու թյուն	
				առկա	չկա	առկա	չկա
1	Ասկերան	83	3955	37	46	53	30
2	Մարտունի	76	2606	45	31	42	34
3	Մարտակերտ	37	1578	18	19	18	19
4	Հադրութ	66	2841	51	15	66	
5	Քաշաթաղ	118	4350	106	12	62	56
6	Շուշի	14	443	8	6	12	2
7	Շահումյան	19	1161	8	11	7	12
	Ընդամենը	**413**	**16934**	**273**	**140**	**260**	**153**

50-ից 2000 գլուխ մանր եղջերավոր կենդանիներ տիրապետողների մասին

ՀՀ	Գործունեության վայրը,շրջան	Ֆերմերների թիվը	Տնօրինվող գլխաքանակը	Է/էներգիայի առկայություն		Ջրի առկայու թյուն	
				առկա	չկա	առկա	չկա
1	Ասկերան	51	11524	34	17	44	7
2	Մարտունի	43	6082	20	23	24	19
3	Մարտակերտ	23	1606	8	15	8	15
4	Հադրութ	16	3205	12	4	16	0
5	Քաշաթաղ	41	10673	29	12	19	22
6	Շուշի	2	201	2		2	
7	Շահումյան	1	55		1		1
	Ընդամենը	**177**	**33346**	**105**	**72**	**113**	**64**

30-ից 300 գլուխ խոզեր տիրապետողների մասին

ՀՀ	Գործունեության վայրը,շրջան	Ֆերմերների թիվը	Տնօրինվող գլխաքանակը	Է/էներգիայի առկայություն		Ջրի առկայու թյուն	
				առկա	չկա	առկա	չկա
1	Ասկերան	21	1137	13	8	16	5
2	Մարտունի	40	1910	25	15	18	22
3	Մարտակերտ	10	408	3	7	3	7
4	Հադրութ	15	745	10	5		15
5	Քաշաթաղ	9	404	6	3	2	7
6	Շուշի	2	76	1	1	2	
7	Շահումյան						
	Ընդամենը	**97**	**4680**	**58**	**39**	**41**	**56**

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Անհրաժեշտությունը

«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացումը պայմանավորված է Արցախի Հանրապետությունում առկա անասնաշենքերի նոր տեխնոլոգիաներով արդիականացնելու, ողջ պոտենցիալը լիարժեք օգտագործելու և, համակարգային մոտեցմամբ, մրցունակ և արդյունավետ անասնաբուծություն ունենալու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Արցախի Հանրապետությունում առկա անասնաշենքերը լիարժեք չեն օգտագործվում, հիմնականում էլեկտրաֆիկացված չեն, անասնաշենքերում աշխատանքներն իրականցվում են մարդակային ռեսուրսի հաշվին՝ ավելացնելով մարդկանց շփումը կենդանաբուծական մթերքների ստացմանը, անասնաշենքերն ապահովված չեն կենդանիների խմելու, ինչպես նաև անասնաշենքերի մաքրության և հարմարավետության համար մշտական հոսող ջրով:

Նպատակը և բնույթը

«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի նպատակն է Արցախի Հանրապետությունում առկա անասնաշենքերի նոր տեխնոլոգիաներով արդիականացումը, անասնաշենքերի ողջ պոտենցիալի լիարժեք օգտագործումը և, համակարգային մոտեցմամբ, մրցունակ և արդյունավետ անասնաբուծություն ունենալը, ինչն իր հերթին կնպաստի Արցախի Հանրապետության տնտեսական զարգացմանը:

Ակնկալվող արդյունքը

Արցախի Հանրապետության կառավարության սույն որոշման նախագծի ընդունման արդյունքում նախադրյալներ կստեղծվեն նորագույն մեխանիզմների կիրառմամբ անասնապահության մեջ տնտեսավարողների եկամուտների ավելացման համար, հնարավորություն կստեղծվի անասնաշենքերն ապահովել էլեկտրաէներգիայով և ջրով, ինչն իր հերթին նախադրյալներ կստեղծի մատչելի մեխանիզմների կիրառմամբ մեքենայացնել անասնապահությունը՝ ապահովելով առավել անվտագ սննդամթերքի արտադրություն, տեսանելիորեն կամրապնդվեն շահառու անասնապահական տնտեսությունները և պայմաններ կստեղծվեն վերջիններիս կողմից ապրանքային արտադրության կազմակերպման և հետագա զարգացման համար, գյուղատնտեսական կենդանիների փակ պահվածքի ապահովմամբ կհասնենք անասնապահական մթերքների արտադրության շահավետ կազմակերպմանը,

արտադրության ծավալի ավելացմանը, կենդանիների մթերատվության բարձրացմանը, նրանց անկորուստ վերարտադրության ապահովմանը:

<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուժության և անասնաբուծության վարչության և իրավաբանական բաժնի կողմից:

<u>Այլ տեղեկություններ</u>

«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ ***Ժ. ՄԻՐԶՈՅԱՆ***

ԻՐԱՎԱԿԱՆ-ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ ԵՎ.ՀԱԿՈԲՅԱՆ

ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Որոշման նախագծի անվանումը՝
«Արցախի Հանրապետությունում անասնապահության զարգացման խթանման ծրագիրը հաստատելու մասին»

Նախագիծը ներկայացնողը՝
ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝
1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն
4. ԱՀ քաղաքաշինության նախարարություն
5. ԱՀ ֆինանսների նախարարություն
6. ԱՀ շրջանների վարչակազմեր

Նախագիծը պատրաստողը՝
Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչություն

_____ ***Ն. Մուսայելյան***
(ստորագրությունը)

«___» _____ 2020 թ.